ıageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 1

ԶԵԿՈՒՅՑ

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

USAID FROM THE AMERICAN PEOPLE
COUNTERPART
Քաղաքացիական Շահերի Պաշտպանության Աջակցության Ծրագիր
CIVIC ADVOCACY SUPPORT PROGRAM - ARMENIA
HELSINKI CITIZENS ASSEMBLY

Վանաձոր 2007

ՉԵԿՈՒՅՑ

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Խմբագրակազմ՝ Էդգար Խաչատրյան
Արմինե Սադիկյան

Լուսանկարները՝ Արմինե Սադիկյան
Նաիրա Բուլղադարյան

Փորձագետներ՝ Արծվի Հարությունյան
Արթուր Սաքունց

ageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան _____ 4

Մեթոդական մաս _____ 5

Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների
վերաբերյալ ՀՀ օրենսդրության վերլուծություն _____ 7

Ռազմագերիների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը _____ 7
Ռազմագերու իրավական կարգավիճակը _____ 7
ՀՀ օրենքի կիրարկումը ապահովող միջոցառումների մասին _____ 8
Զինծառայողների սոցիալական ապահովության տեսակները _____ 9

Արդյունքների վերլուծություն _____ 11

Նախկին ռազմագերիների առողջապահական,
զբաղվածության և սոցիալական խնդիրները _____ 12
Նախկին ռազմագերիների հոգեբանական
և հասարակության մեջ նրանց ինտեգրման խնդիրները _____ 17

Եզրակացություն _____ 18

Առաջարկություններ _____ 20

Հավելվածներ _____ 21

ՆԱԽԱԲԱՆ

2007 թ-ի մայիսի 1-ից «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը իրականացնում է «Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանության և հասարակության մեջ նրանց ինտեգրման նպաստումը» ծրագիրը՝ ուղղված նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանությանը և հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ուսումնասիրություն նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների սոցիալական, առողջապահական, հոգեբանական և զբաղվածության խնդիրների ուղղությամբ: Վերհանված խնդիրների և օրենսդրական ուսումնասիրության հիման վրա պատրաստվել է զեկույց, որը ներկայացնում ենք հանրությանը: Զեկույցի տարածման միջոցով անկնկալում ենք բարձրացնել հասարակական ընկալման մակարդակը նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների խնդիրների վերաբերյալ, պետական մարմինների պատասխանատվությունը նրանց խնդիրների լուծման վերաբերյալ, որը կնպաստի նրանց ինտեգրմանը հասարակության մեջ:



Ըստ էության, ծրագիրը ներառել է երկու ուղղություն՝ ուսումնասիրություն և իրազեկում:

Ծրագրի արդյունքում բացահայտված խնդիրները ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետությունում գործող հասարակական կազմակերպություններին, պետական մարմիններին, միջազգային կազմակերպությունների, տեղական և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչներին:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԱՍ

2007 թ-ի մայիս-հուլիս ամիսների ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը իրականացրել է ուսումնասիրություն ՀՀ Արարատի, Լոռու, Շիրակի մարզերում և Երևան քաղաքում: Ուսումնասիրությունը նպատակ ուներ բացահայտել նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների սոցիալական, առողջապահական, հոգեբանական և զբաղվածության խնդիրները:

Ուսումնասիրությունը իրականացվել է վերոնշյալ վայրերի 10 ռազմագերիների և նրանց ընտանիքների շրջանում:

Տվյալների ստացման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝

խորքային հարցազրույց, որի միջոցով բացահայտվել են նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների առկա խնդիրները և դրանց պատճառները: Հարցազրույցների միջոցով պարզվել են նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների ապրուստի միջոցների աղբյուրները, աշխատանք չունենալու պատճառները, պետական մարմինների վերաբերմունքը նրանց խնդիրների ու դրանց լուծման վերաբերյալ: Ուսումնասիրության շրջանակներում անց է կացվել 10 խորքային հարցազրույց ՀՀ Արարատի, Լոռու, Շիրակի մարզերում և Երևան քաղաքում: Հարցազրույցը անց է կացվել համաձայն նախապես մշակված պլանի:

անկետավորում, որի միջոցով պարզվել են նախկին ռազմագերիների տարիքը, առողջական վիճակը, հաշմանդամության կարգը, արտոնություններից օգտվելու նրանց իրավունքները, ինչպես նաև բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցները և դրանց ձեռքբերման ուղիները, աշխատանքի առկայությունը կամ բացակայությունը, պետական և ոչ պետական մարմինների հետ նրանց հարաբերությունները, պետական մարմիններին դիմելու դեպքում խնդրի բնույթը և դրանց պատասխանները:

դիտարկում, որի միջոցով ուսումնասիրվել են նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների կենսապայմանները, նրանց հոգեվիճակները, ընտանեկան հարաբերությունները:

սոցիոլոգիական հարցումներ, որոնք նպատակ ունեին պարզել հասարակության իրազեկման մակարդակը նախկին ռազմագերի-

ների և նրանց ընտանիքների առկա խնդիրների, նրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի վերաբերյալ, ռազմագերիների վերաբերյալ ստացվող ինֆորմացիայի աղբյուրները, ըստ քաղաքացիների նրանց խնդիրների լուծման և նրանց ինտեգրման համար պատասխանատու կառույցները: Հարցումների միջոցով ուսումնասիրվել է, թե ինչպես կարող է հասարակությունը նպաստել հասարակության մեջ նախկին ռազմագերիների ինտեգրմանը:

Հարցումներն անց են կացվել ՀՀ Լոռու, Շիրակի, Արարատի մարզերում և Երևան քաղաքում 200 հարցվողների շրջանում, որոնցից 122-ը 18-40 տարեկան է, 52-ը՝ 41-60 և 26-ը 61 և բարձր տարիքի քաղաքացիներ: Նրանցից 75-ը արական սեռի են, իսկ 125-ը իգական: Հարցումները անց են կացվել ըստ ֆոկուս խմբերի՝ պետական և մասնավոր հաստատություններում, սպասարկման ոլորտում, հկ-ների ներկայացուցիչների, ուսանողների, թոշակառուների և գործազուրկների շրջանում:

տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում, որի միջոցով կոնկրետ փաստերի վերաբերյալ փորձել ենք պետական մարմիններից ստանալ տեղեկատվություն՝ ուղղված նախկին ռազմագերիների շահերի պաշտպանությանը:

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ռազմագերիների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը

Զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը կազմված է հետևյալ իրավական ակտերից:

1. «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 1998 թ-ի հոկտեմբերի 27-ին և նույն օրենքում կատարված փոփոխությունները՝ ընդունված 2001 թ-ի մայիսի 15-ին, 2001 թ-ի հուլիսի 27-ին, 2002 թ-ի հունիսի 26-ին, 2002 թ-ի հուլիսի 3-ին, 2003 թ-ի նոյեմբերի 18-ին, 2003 թ-ի դեկտեմբերի 25-ին, 2003 թ-ի դեկտեմբերի 25-ին, 2004 թ-ի փետրվարի 18-ին, 2004 թ-ի դեկտեմբերի 14-ին, 2004 թ-ի դեկտեմբերի 14-ին, 2005 թ-ի հուլիսի 8-ին, 2005 թ-ի նոյեմբերի 11-ին, 2006 թ-ի հոկտեմբերի 4-ին, 2006 թ-ի նոյեմբերի 29-ին, 2006 թ-ի դեկտեմբերի 12-ին:

2. ՀՀ Կառավարության N 778 որոշումը՝ ընդունված 2000 թ-ի նոյեմբերի 27-ին «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին և նույն օրենքում կատարված փոփոխությունները:

3. ՀՀ նախագահի ՆՀ-553 հրամանագիրը՝ ընդունված 2000 թ-ի ապրիլի 18-ին «Գերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողով ստեղծելու մասին»

4. ՀՀ նախագահի ՆՀ-693 հրամանագիրը՝ ընդունված 2000 թ-ի հոկտեմբերի 23-ին «Գերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին»

Ռազմագերու իրավական կարգավիճակը

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության որևէ ակտով չի սահմանվում ռազմագերի հասկացությունը և որպես այդպիսին իրավական կարգավիճակ չի ենթադրվում: «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության» մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենքի) հոդված 2-ով սահմանվում է զինծառայող հասկացությունը, համաձայն որի,

ıageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 8

որպես այդպիսիք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմինների (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական եւ շարքային անձնակազմի ծառայողները: Օրենքի 3-րդ հոդվածով զինծառայողներին հավասարեցված անձինք են համարվում

ա) վարժական հավաքների կանչված զինապարտները,
բ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները,
գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության աշխատողները,
դ) Հայաստանի Հանրապետության զինդատախազության աշխատողները, որոնք ստանում են ֆինանսական, պարենային և հանդերձանքի ապահովություն:

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի դրույթները, համաձայն հոդված 3-ի, տարածվում են զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների վրա: Զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին վերաբերող դրույթները տարածվում են նաև ծառայությունից սահմանված կարգով արձակված, և անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողների ընտանիքների վրա, որոնց մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ առաջացած հիվանդությունը:

Օրենքը որևէ կերպով չի կարգավորում ռազմագերու՝ մարտական գործողություններին մասնակցության իրավունքների ստացումը, միևնույն ժամանակ հանձնաժողովի կանոնադրության վերաբերյալ ՀՀ նախագահի հրամանագրում կիրառվում է գերիներ (կանոնադրության 1-ին կետ, 4-րդ կետի ա) և գ) ենթակետեր և այլն) և ռազմագերիներ, պատանդներ (5-րդ կետի բ) ենթակետ) հասկացությունները: Ավելին, հանձնաժողովը կարող է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկություններ ներկայացնել (հրամանագրի 5-րդ կետի ը) ենթակետ) գերիներին, պատանդներին և սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական կամ նյութական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ: Այսինքն՝ ՀՀ օրենսդրությունը թե՛ տերմինաբանական, թե՛ իրավական ակտերի հիերարխիայի առումով լուրջ համապատասխանեցման և համակարգման կարիք ունի:

Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումը ապահովող միջոցառումների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ պաշտպանության մարտերին մասնակցած անձանց «մարտական գործողությունների մասնակցի» կարգավիճակ տալու կարգը: Ըստ այդ կարգի, մարտական գործողությունների մասնակից են համարվում 1990-94 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպա-

ıageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 9

նության մարտերին ոչ պակաս, քան երեք ամիս ընդհանուր տևողությամբ մասնակցած անձինք, ինչպես նաև մարտական գործողությունների ժամանակ վիրավորվելու հետևանքով հաշմանդամ դարձած անձինք՝ անկախ մարտական գործողություններին մասնակցելու ժամկետից (կարգի 1-ին կետ): Կարգի 2-րդ կետի համաձայն, 3 ամսից պակաս տևողությամբ մարտական գործողություններին մասնակցած, մարտական գործողություններին օժանդակած անձինք, մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ կարող են ձեռք բերել հանձնաժողովի որոշմամբ: Կառավարության որոշմամբ, փաստորեն, ևս ուղղակիորեն չի ճանաչվում մարտական գործողություններին մասնակցած և գերի ընկած զինծառայողի մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու իրավունքը:

Զինծառայողների սոցիալական ապահովության տեսակները

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքը նախատեսում է սոցիալական ապահովության և պաշտպանության հետևյալ տեսակները՝

1. ֆինանսական աջակցություն՝

• կենսաթոշակ (երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ)
• դրամական օգնություն (միանվագ, հանգստյան կամ ուղեգրի փոխհատուցում)
• հուղարկավորության ծախսերի հետ կապված փոխհատուցում
• թաղման նպաստ

2. նյութական ապահովություն՝ պարենային և հանդերձանքի ապահովություն (կամ դրա փոխարեն դրամական փոխհատուցում)

3. Աշխատանքային երաշխիքներ

4. Բժշկական սպասարկում

5. Բնակարանային ապահովություն

6. Տրանսպորտային սպասարկում

7. Կրթություն ստանալու երաշխիքներ:

Կառավարության թիվ 778 որոշմամբ զինծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ սահմանվում են զինվորական ծառայության ստաժում հաշվառվող, այդ թվում արտոնյալ պայմաններում ծառայողական կամ այլ բնույթի գործունեության տեսակների ցանկը, հաշվառման կարգն ու պայմանները: Համաձայն կարգի 2-րդ կետի 2-րդ մասի բ) ենթակետի, երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ստացած զինծառայողի զինվորական ծառայության ստաժում 1 ամսվա ծառայությունը 2 ամիս հաշվվում է գերության ժամանակաշրջանը, եթե զինծառայողը կամավոր չի գերվել և գերության ընթացքում հանցագործություն չի կատարել Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

Զինծառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակ հատկացնելու կամ ստանալու իրավունքի վերաբերյալ փաստաթղթերի ցանկում (ցանկի 4-րդ կետ) նշվում է, որ ռազմագերիների և անհայտ կորածների ընտանիքների անդամները օրենքով սահմանված արտոնություններից և երաշխիքներից օգտվելու համար դիմումի հետ միասին ներկայացնում են գերվածի կամ անհայտ կորածի զորամասի հրամանատարության կողմից տրված տեղեկանքը՝ անհայտ կորչելու հանգամանքների մասին: Ինչպես տեսնում ենք, վերստին բացակայում է հս-

տակությունը գերվածի վերաբերյալ տեղեկանքի տրամադրման հարցը: Ավելին, զինծառայողի կամավոր կամ իր կամքից անկախ հանգամանքներում գերեվարման հարցը մնում է առկախ, և հայտնի չէ այն մոտեցումը, թե ինչպես պետք է նման հարցում հստակություն մտցվի: Օրենսդրությունը պատասխաններ չի տալիս, թե որ մարմինը և ինչպես պետք է որոշի գերի ընկնելու հանգամանքները: Էլ ավելի դժվար է պատկերացնել, թե ինչպես և ում կողմից է որոշվելու, թե գերության ընթացքում ռազմագերին կամ զինծառայողը կատարել է հանցագործություն Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում կամովին գերի հանձնվելու դեպքում (հոդված 381) և սահմանում է՝ «վախկոտության կամ փոքրոգության պատճառով կամովին գերի հանձնվելը պատժվում է 8-15 տարի ժամկետով»: 382 հոդվածով գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից որոշակի գործողություններ ենթակա են քրեական պատասխանատվության.

- ռազմական նշանակություն ունեցող աշխատանքներին կամովին մասնակցելը, որը ակնհայտ կերպով վնաս կարող է պատճառել Հայաստանի Հանրապետությանը կամ նրա դաշնակից պետությանը (ազատազրկում 3-8 տարի ժամկետով)

- մյուս ռազմագերիների նկատմամբ բռնություն գործադրելը կամ դաժանորեն վարվելը (ազատազրկում 2-8 տարի ժամկետով)

- շահադիտական դրդումներով կամ իր նկատմամբ հակառակորդի ներողամիտ վերաբերմունքը ապահովելու նպատակով գործողությունների կատարումը, որոնք ուղղված են մյուս ռազմագերիների դեմ:

Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսդրությունը խիստ քրեական պատիժ է սահմանում գերության դեպքում, որն էլ իր հերթին էական ազդեցություն է թողնում ռազմագերու և նրա ընտանիքի սոցիալական ապահովության խնդրի վրա:

Համեմատելով «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքը և կառավարության որոշումները՝ համոզվում ենք, որ օրենքը շատ ընդհանուր սահմանումներ է տալիս զինծառայող հասկացության վերաբերյալ, և նրանց հավասարեցված անձանց թվում ուղղակիորեն ընդգրկված չեն ռազմագերիները: Զինծառայողների համար նախատեսված սոցիալական ապահովության համակարգից ռազմագերին կարող է օգտվել, եթե ստանա մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ, բայց այդ կարգավիճակը տրվում է արդեն ավելի ցածր իրավական ուժ ունեցող փաստաթղթով՝ կառավարության որոշմամբ, որով ռազմագերու՝ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակի տրամադրումը ուղղակիորեն կախված է պաշտպանական գերատեսչությունից: Վերջինս է տրամադրում այն տեղեկանքը, որով կարող է հերքվել կամ ճանաչվել զինծառայողի գերի ընկնելու փաստը: Իրականում գերի ընկնելու հանգամանքների ուսումնասիրման կամ բացահայտման վերաբերյալ գոյություն չունի անկախ հանձնաժողով: ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում նաև նախկին ռազմագերու հատուկ կարիքների (հոգեբանական, առողջապահական, աշխատանքային) լուծման հնարավորություն:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի հետևանքով տուժածների խնդիրների ուսումնասիրման ընթացքում հնարավորություն ենք ունեցել ծանոթանալ նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների խնդիրներին: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը զբաղվում է նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների իրավունքների և շահերի պաշտպանությամբ, անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել նախկին ռազմագերիներին ու նրանց ընտանիքներին, ուսումնասիրվել և հրապարակայնացվել են նրանց խնդիրները:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախկին ռազմագերիները և նրանց ընտանիքները ունեն տարբեր տեսակի խնդիրներ՝ գերության հետևանքով ձեռք բերած առողջական, հոգեբանական խնդիրներ և սոցիալական ապահովության, զբաղվածության խնդիրներ, բացի այդ առկա է այս խմբի խնդիրների լուծման համար պատասխանատվություն կրող պետական մարմինների անտարբերությունը և նրանց խնդիրների վերաբերյալ հասարակական իրազեկման ցածր մակարդակը:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ երեք մարզերում և Երևան քաղաքում 200 հարցվողներից 54-ը ընդհանրապես տեղյակ չեն, թե ովքեր են նախկին ռազմագերիները: 54 հոգին իրենց շրջապատում ունեն նախկին ռազմագերիներ: 200 հարցվողներից 146-ը տեղյակ չեն, թե ինչպիսի խնդիրներ ունեն նրանք:



Գիտեք արդյո՞ք, թե ով է նախկին ռազմագերին

Այո	27%
Ոչ	73%



Ձեր շրջապատում կա՞ն ծանոթ նախկին ռազմագերիներ

Այո	27%
Ոչ	73%



Լսել եք արդյո՞ք ռազմագերիների խնդիրների մասին, եթե այո, խնդրում եմ նշել աղբյուրը

Տպագիր մամուլ	18%
Հեռուստատեսություն	37%
Ռադիո	7%
Ինտերնետ	5%
Շրջապատ եւ շփումներ	33%
Հկ	0%

ıageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 12

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ըստ հարցվողների, նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուր է հանդիսանում հեռուստատեսությունը (90 հոգի), այնուհետև անձնական շփումները և շրջապատը (82 հոգի), իսկ հետո տպագիր մամուլը (44 հոգի):

154 հոգի կարծում է, որ նախկին ռազմագերիները հասարակության լիարժեք անդամ և սովորական մարդիկ են, 52 մարդ արտահայտել է այն կարծիքը, որ խղճում է նրանց: Հարցվողներից 101-ը գտնում է, որ նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների խնդիրների լուծման համար պատասխանատու է պետությունը, 45-ը կարծում է, որ կառավարությունն է պատասխանատու, իսկ 30-ի կարծիքով հասարակությունը: Հարցվողների մեծամասնության կարծիքով նախկին ռազմագերիների ինտեգրման համար անհրաժեշտ է ընդունել նրանց որպես հասարակության լիարժեք անդամ, 11 հոգու կարծիքով պետք է բարձացնել նրանց խնդիրները և դիմել իշխանություններին, 10 հոգի գտնում են, որ նրանք ընդհանրապես չունեն ինտեգրման խնդիր:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախկին ռազմագերիները և նրանց ընտանիքի անդամները պետական մարմիններին իրենց խնդիրների լուծման համար դիմելիս բավականին երկար ժամանակ են սպասում և շատ հաճախ նրանց խնդիրներին լուծումներ չեն տրվում: Բացի այդ, անբավարար է այնպիսի հասարակական կառույցների դերը, որոնք կզբաղվեին նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանությամբ, որն առավել զգալի է ոչ մայրաքաղաքային վայրերում:



Ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը նրանց հանդեպ

Նրանք սովորական մարդիկ են, հասարակության լիարժեք անդամ	71%
Խղճում եմ նրանց	24%
Դրական	1%
Նրանք ազգի հերոս են	0%
Հարգում եմ	3%
Նրանց առավելություն եմ տալիս	1%
Սովորական մարդիկ չեն	0%

Նախկին ռազմագերիների առողջական, զբաղվածության եւ սոցիալական խնդիրները

Ուսումնասիրության համար ընտրվել են մեծ և փոքր բնակավայրերը, որպեսզի հնարավոր լիներ պարզել, թե արդյոք նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների խնդիրները կարող են տարբեր լինել՝ կախված քաղաքում կամ գյուղում բնակվելուց:

Հարցման մասնակից 10 ռազմագերիներից միայն երկուսն են աշխատում, այն էլ եթե գտնվում է աշխատանք, նրանցից չորսը աշխատունակ չեն գերության հետևանքով ձեռք բերած հիվանդության պատճառով, չորսն էլ չեն աշխատում համապատասխան աշխատանք

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախկին ռազմագերին ծմեռվա վառելիքը հավաքել է ննջասենյակում

չգտնելու պատճառով: Հարցազրույցի մասնակիցներից միայն մեկն է շարունակել աշխատել գերությունից հետո, սակայն, ներկայումս ևս չի աշխատում (Տե՛ս հավելված 1): Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ռազմագերիներից ոմանք գտնվում են Ռուսաստանում արտագնա աշխատանքի նպատակով:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 10 նախկին ռազմագերիներից միայն վեցն ունեն հաշմանդամության կարգ. մեկ հոգի ստացել է առաջին կարգի հաշմանդամություն, երեքը երկրորդ կարգի և երկու հոգի երրորդ կարգի հաշմանդամություն: Նշենք, որ հարցազրույցի մասնակիցների միջին տարիքը 30 տարեկանն է:

Երկու նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների ամսական եկամուտը կազմում է մինչև 20000 դրամ, երեք նախկին ռազմագերու և նրանց ընտանիքներինը մինչև 50000 դրամ և չորս հոգունը 50000 դրամ և ավելին: Մեկ ռազմագերի, որը նույնպես բնակվում է ընտանիքով չունի եկամտի որևէ աղբյուր, միևնույն ժամանակ հանդիսանում է երկրորդ կարգի հաշմանդամ և չի ստանում օրենքով նախատեսված իր հաշմանդամության թոշակը (խնդրի վերաբերյալ գրություն է ուղարկվել ՀՀ Պաշտպանության նախարարություն և ռազմագերին հրավիրվել է այնտեղ): Այս ընտանիքների ապրուստի հիմնական միջոցներն են որոշ դեպքերում հաշմանդամության կամ ծնողների թոշակը, որոշ դեպքերում՝ աղքատության նպաստը, երբեմն էլ՝ հողագործությունը կամ բարեկամների և հարազատների աջակցությունը: 10

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աջակցության համար բազմիցս դիմել են տարբեր կառույցների, սակայն...

նախկին ռազմագերիներից և նրանց ընտանիքներից միայն մեկն է օգտվում աղբի և երեխայի ուսման վարձը 50 տոկոս վճարելու զեղչից:

Դիտարկման միջոցով փորձում էինք պարզել նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների կենցաղային և բնակարանային պայմանների վիճակը: Արարատի մարզի Զոդ գյուղում բնակվող 1 նախկին ռազմագերի հրդեհի հետևանքով կորցրել է տունը և արդեն մի քանի տարի է բնակվում է երկսենյականոց (մոտավորապես 24 մ^2) փայտաշեն և մետաղաշեն

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախկին ռազմագերին ստիպված է շինարարական աշխատանք կատարել, չնայած առողջական խնդիրներ ունի: Հակառակ դեպքում ինչպե՞ս ապրել:

տնակում՝ ծնողների հետ: Տնակը չուներ բնակության համար նվազագույն պահանջները բավարարող պայմաններ. չկար խոհանոց, լոգարան, գազ, ջուր, որի համար ստիպված են գնալ մի քանի հարյուր մետր: Նույն մարզում բնակվող մեկ այլ ռազմագերի բնակվում էր կիսաշեն քարե տանը ընտանիքի հետ, որը զրկված էր էլեկտրական հոսանքից (վարձավճարը չվճարելու պատճառով) և գազից: Շիրակի մարզի Գյումրի քաղաքում մոր հետ բնակվող նախկին ռազմագերին ապրում էր մտերիմների կիսաքանդ տանը առանց ջրի, գազի և էլեկտրական հոսանքի: Լոռու մարզի Վանաձոր քաղաքում նախկին ռազմագերու մայրը բնակվում էր հոսանքից, գազից զուրկ բնակարանում, որի միակ եկամուտը թոշակն էր և այն հազիվ բավականացնում էր սնունդ ձեռք բերել:

Ուսումնասիրման առանձին խնդիր էր հանդիսանում նախկին ռազմագերիների առողջապահական վիճակի բացահայտումը: Հարցազրույցի մասնակից ռազմագերներից բոլորն էլ գերության հետևանքով ձեռք են բերել տարբեր հիվանդություններ: Նրանցից միայն երկուսին չի հաջողվել ձեռք բերել հաշմանդամի կարգավիճակ՝ ֆինանսական միջոցների բացակայության և հաշմանդամության կարգի տրամադրման երկարատև ընթացքի պատճառով: Ընդհանրապես, հաշմանդամության կարգի տրամադրման գործընթացի խոչընդոտ են հանդիսացել, ըստ այն ռազմագերիների, ովքեր ստացել են հաշմանդամության որևէ կարգ, հաշմանդամության կարգի տրամադրման երկարատև ընթացքը: Հաշմանդամության կարգի տրման համար խոչընդոտ է հանդիսացել նաև համապատասխան զինկոմիսարիատի և զորամասի հրամանատարի կողմից տեղեկանքի տրամադրման գործընթացը:

Հարցվող բոլոր ռազմագերիները ունեն խնդիրներ բժշկի կողմից նշանակված և ընդհանրապես բուժվելու համար անհրաժեշտ դեղամիջոցներ ձեռք բերելու հարցում: Բոլորն էլ ստիպված են դեղամիջոցներ ձեռք բերել սեփական միջոցներով, երեք հոգի նաև աջակցություն

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆԵՐԴԻՐ 1

Վանաձորում բնակվող նախկին ռազմագերու մայրը արդեն շուրջ 6 տարի չի տեսել որդուն, որը գերությունից վերադառնալուց հետո մեկնել է Ռուսաստան: Մոր հավաստմամբ, տուն վերադառնալուց հետո նա բավականին տարօրինակ վարքագիծ ուներ: Մի քանի անգամ փորձել էր աշխատանք գտնել, սակայն հետո զգացել է, որ առողջությունը թույլ չի տալիս աշխատել:

Նա ապրում է մենակ, բավականին ծանր պայմաններում, ապրուստի միակ միջոցը թոշակն է: Նա դեռ սպասում է որդու երկրորդ վերադարձին...

են ստացել Միջազգային Կարմիր Խաչի կոմիտեի կողմից, «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿ-ի կողմից, իսկ ռազմագերիներից մեկը անվճար դեղամիջոց է ստանում հոգեբուժական դիսպանսերից՝ որպես այնտեղ գրանցված հիվանդ:

Ուսումնասիրման խնդիրներից մեկը նախկին ռազմագերիների ինտեգրման խնդիրն էր հասարակության մեջ: Ըստ հարցվող ռազմագերիների իրենք չունեն ինտեգրման խնդիր, սակայն նրանց շրջապատի կարծիքով նրանց մոտ առկա է այդ խնդիրը: Հարազատների հավաստմամբ գերությունից վերադառնալուց հետո նրանք մեկուսանում են հասարակությունից, նույնիսկ ոմանք չեն ցանկանում շփվել ընկերների կամ հարևանների հետ: Նախկին ռամագերիներն ունեն առողջարաններում կամ հանգստյան վայրերում հանգստի կազմակերպման խնդիր:

ıageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 17

Նախկին ռազմագերիների հոգեբանական եւ հասարակության մեջ նրանց ինտեգրման խնդիրները

Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների հետ անցկացվող հարցազրույցի հարցաթերթիկի մշակման մեջ ներգրավվել է փորձագետ, «Վանաձորի հոգեբանական վերականգնողական կենտրոն» ՀԿ նախագահ, հոգեբան Արծվի Հարությունյանը, նրանց հոգեբանական և հասարակության մեջ ունեցած խնդիրները բացահայտելու նպատակով:

Ներկայացնում ենք հոգեբան-փորձագետի եզրակացությունը.

Նշված կոնտինգենտի հոգեկան և հոգեբանական խնդիրները աչքի են ընկնում իրենց յուրահատկությամբ. բացի այն, որ նրանք ձեռք են բերել տարբեր աստիճանի ֆիզիկական խեղումներ և հիվանդություններ, նրանց մոտ առավել ընդգծված են հետևյալ սիմպտոմներն ու հոգեվիճակները.

• զայրույթ, ագրեսիվություն, որոնք նախկինում բնորոշ չեն եղել,

• անորոշություն, տառապելու և անհայտության (հետևանքով) մտավախություն,

• անքնություն, քնի խանգարումներ, մղձավանջային երազներ,

• տրամադրության անսպասելի փոփոխություններ,

• օտարման, խորթության զգացում,

• մի քանիսի մոտ՝ բնակության փոփոխության ցանկություն, մասամբ՝ աշխատանք գտնելու, մասամբ՝ միջավայրը փոխելու նպատակով,

• ներքին սպասելիքի ու իրականության միջև հակասություն,

• տարբեր տիպի վախեր, նևրոտիզացիա, ծխելու սովորության խորացում,

• շփման սահմանափակում, դեպրեսիվ տրամադրություն, գիշերային վախեր, գոռոցներ:

Եզրակացություն. որոշակի վերապահումներով, քանի որ նմանատիպ նկարագրությունները պատճառագիտական տեսանկյունից առավել մանրակրկիտ ուսումնասիրություն են պահանջում, կարելի է պնդել, որ նախկին ռազմագերիների ու նրանց ընտանիքի որոշ անդամների մոտ իրենց անձնական կյանքում տեղի ունեցած իրադարձությունը բեկումնային նշանակություն է ունեցել, դառնալով ինչպես հետտրավմատիկ ստրեսային խանգարման (PTSD), այնպես էլ՝ վախի (ֆոբիկ), կպչուն նևրոզի և նևրոտիկ դեպրեսիայի, ֆրուստրացիաների, ռեգրեսիվ (առավել փոքր տարիքին բնորոշ) վարքագծի, այն է՝ դեռևս նորմալ կամ ախտաբանական քրոնիկական հակազդումների պատճառ, որոնք պահանջում են կայուն և հետևողական հոգեբանական վերականգնողական միջամտություն: Ցուցված է ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբային հոգեթերապիան և խորհրդատվությունը՝ կոմպլեքս միջոցառումների և սոցիալ-բարոյական ռեաբիլիտացիայի հետ միասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մի շարք կարևոր խնդիրներ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը շատ ընդհանուր սահմանումներ է տալիս զինծառայող հասկացության վերաբերյալ, ավելին նրանց հավասարեցված անձանց թվում չի նշվում ռազմագերի հասկացությունը:

Զինծառայողների համար նախատեսված սոցիալական ապահովության համակարգից օգտվելու համար ռազմագերիները պետք է ստանան ռազմական գործողությունների մասնակցի կարգավիճակ, որը տրվում է օրենքից ավելի ցածր կարգավիճակ ունեցող փաստաթղթով, որով ռազմագերու կարգավիճակի ձեռքբերումը կախված է պաշտպանական գերատեսչության կողմից տրվող տեղեկանքից: Գոյություն չունի անկախ հանձնաժողով, որը կուսումնասիրի կամ կբացահայտի զինծառայողի գերի ընկնելու հանգամանքների փաստը:

Կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում նախկին ռազմագերիների հաշմանդամության կարգի տրամադրման գործընթացը: Ըստ ռազմագերիների սա բավականին երկարատև գործընթաց է, հատկապես մարզերի բնակիչների համար: Այս պայմաններում որոշ ռազմագերիներ չեն ցանկացել շարունակել հաշմանդամության կարգի ձեռքբերման գործընթացը, չնայած որ հաշմանդամության կարգ ստանալու իրավունք ունեն: Հաշմանդամության կարգի ձեռքբերման խոչընդոտ է հանդիսանում նաև նախկին ռազմագերիների ֆինանսական սուղ պայմանները:

Գերիների ֆիզիկական և հոգեկան տառապանքները ազդել են նրանց առողջության վրա: Նրանց մոտ առկա հոգեբանական խնդիրները չեն ստանում լուծում: Առանձին դեպքերում նրանք վերականգնողական ծրագրերի մեջ են ընդգրկվել «Ընդդեմ իրավական կամայականությունների» հկ-ի կողմից: Սակայն միջոցառումների որևէ համալիր ծրագիր և սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիա պետության կողմից նրանք չեն ստանում:

Հասարակության իրազեկման ցածր մակարդակը նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների խնդիրների վերաբերյալ խոչընդոտում է նրանց ինտեգրմանը հասարակության մեջ: Սրանից կարող ենք եզրակացնել, որ իրազեկումը բավարար չէ:

ageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 19

ՆԵՐԴԻՐ 2

Ամերիկայի Միացյալ Նահանգները այն երկրներից է, որը ունեցել է ռազմագերիներ տարբեր պատերազմների ժամանակ և, ըստ վիճակագրության, մինչև 2000 թ-ի հունվարի 1-ը եղել է 49,707 ռազմագերի, որոնք դեռ կենդանի էին: ԱՄՆ փորձը այս բնագավառում ցույց է տալիս, որ ԱՄՆ կոնգրեսը սահմանել է ռազմագերու կարգավիճակ, ըստ որի ռազմագերի է համարվում այն մարդը, որը իր պարտականությունները կատարելիս բռնվել է հակառակորդի կամ դրա կառավարության կողմից պատերազմի կամ պատերազմական իրավիճակների ընթացքում: ԱՄՆ-ում նախկին ռազմագերիները իրավասու են ստանալ հաշմանդամության փոխհատուցում ըստ հաշմանդամության կարգի: Նվազագույնը պետք է լինի 10 տոկոս, որի համար նախատեսված է 98 ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձրը՝ 100 տոկոս, որի համար ստանում են ամսական 2,287 ԱՄՆ դոլար: Նրանք նաև օգտվում են հիվանդանոցային բուժումից առանց սահմանափակման: Նրանք, ովքեր գերության մեջ մնացել են 90 օրից պակաս, չեն օգտվում միայն անվճար ատամնաբուժական ծառայությունից: Բացի այդ գոյություն ունի որոշակի հատուցում որոշակի վետերանների համար, որը կարող են ստանալ նաև նրանց հարազատները ըստ սահմանված կարգի: Այս ամենից բացի նրանք իրավունք ունեն ստանալ առողջական ապահովագրություն, ունեն ֆեդերալ աշխատանքի նախընտրություն, ներքին փոխառության երաշխիք և նրանց հարազատներին կրթական աջակցության հնարավորություն:

ԱՄՆ նախագահի 2003 թ-ի հրամանով ապրիլի 9-ը ճանաչվել է նախկին ռազմագերիների օր: ԱՄՆ նախկին ռազմագերիները օգտվում են օրենքով սահմանված մի շարք արտոնություններից և ստանում են աջակցություն:

http://www.axpow.org/entitlements.htm;
Proclamation 7661 of April 9, 2003. By the President of the United States of America

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրների վերաբերյալ առաջարկություններն են.

- Հստակեցնել ՀՀ օրենսդրությունը տերմինաբանական և իրավական հիերարխիայի առումով. սահմանել ռազմագերի հասկացությունը, որպես իրավական կարգավիճակ,

- Ճանաչել մարտական գործողություններին մասնակցած և գերի ընկած զինծառայողների մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու իրավունքը,

- Ապահովել նախկին ռազմագերիների գերի ընկնելու հանգամանքների ուսումնասիրության կամ բացահայտման ուղղությամբ աշխատող հանձնաժողովի անկախությունը,

- Ապահովել ՀՀ «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքով նախատեսված սոցիալական ապահովության և պաշտպանության տեսակների կիրարկումը նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների համար,

- Պարզեցնել ռազմագերիների հաշմանդամության կարգի հետ կապված գործընթացը,

- Ապահովել նախկին ռազմագերիների համար կազմակերպվող վերականգնողական ծրագրերի շարունակելիությունը և հանգստի պայմանների կազմակերպումը,

- Իրականացնել նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների խնդիրների վերաբերյալ հասարակական իրազեկմանն ուղղված միջոցառումներ:

ıageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 21

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Նախկին ռազմագերին սպասում է վարչապետի պատասխանին

Սամվել Պադոյանը տարվա մեջ ընդամենը երկու օր է կրում զինվորական համազգեստը: Շուշիի ազատագրման տարեդարձի նախօրեին պահարանից հանում է խնամքով պահված կոստյումն ու տոնական օրերն անցկացնում զինվորականի տեսքով: Մեր այցելությունը 41-ամյա գյումրեցու համար առիթ էր այս տարի մեկ անգամ եւս կրել շքանշաններով զարդարված մայորի կոստյումը:

Արցախյան պատերազմի տարիներին նա աշխատում էր Գյումրիի զինկոմիսարիատում: 1994-ի հունվարին ռուսական զորամասի մեքենաներով ուղեւորվեցին Վարդենիս: 11 հոգով՝ հինգը զինկոմիսարիատի աշխատակիցներ, մնացածը՝ վարորդներ, էջմիածնի զինմասի 200 զինվորի Զոդ գյուղ տեղափոխելիս ընկան հակառակորդի կրակոցների տակ:

«Որ սկսեցին կրակել, տեղ չունեինք գնալու, կամ պիտի սարին զարկվեինք, կամ ընկնեինք ձորը»,- հիշում է Սամվելը: Վեց ավտոմեքենաներից չորսին ու դրանց յոթ ուղեւորնե-

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայրը դեմ չէ, որ որդին լինի զինվորական.....

րին հաջողվում է խույս տալ ու փախչել, իսկ Սամվելն ու նրա երեք զինակիցները հայտնվում են սահմանի այն կողմում: Մինչեւ հիմա էլ նա չի հասկանում, թե ինչպես են ճանապարհը շփոթել ու Զոդ գյուղ շարժվելու փոխարեն հայտնվել Քելբաջարում:

«Մեզ ինստրուկտաժ չէին արել, թե ուր գնանք, մինչեւ մեքենաները կանգնեցրինք, որ անվադողերը փչենք, 50-60 հոգի հարձակվեցին», -շարունակում է Սամվելը:

Հակառակորդի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ Սամվելն իրեն «խելոք չի պահում»: «Թքեցի երեսին: Նա էլ դանակը պտտացրեց ու, մինչեւ հասկացա, ականջս թռցրեց»: Սամվելի ընկերներին եւս հակառակորդը մարմնական վնասվածքներ էր հասցրել. «Ստյոպի գլուխն էին վնասել, Աշոտի՝ թեւը, իսկ Ռազմիկին տասնհինգ, թե քսան տեղից վնասել էին թիկունքից»:

Հայ գերիներին ադրբեջանցիները տանում են Խանլարի հոսպիտալ, որտեղ, եթե չլիներ ժամանակին Գյումրիում ծառայած ադրբեջանցի մի փոխգնդապետ, հայերին պատրաստ էին մորթել: «Ձեր հացը կերել եմ, դուք իմ համերկրացին եք»,- ասում է ադրբեջանցի զինվորականը:

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեկ ամիս Ադրբեջանի ազգային անվտանգության մեկուսարանում պահելուց հետո նրանց տեղափոխում են Գոբուստանի բանտ, որտեղ պահում էին նաեւ ադրբեջանցի դատապարտյալների:

Մոտ կես տարի նրանց նախաճաշը, ճաշն ու ընթրիքը մի կտոր հացն էր եւ ապուրի ջուրը: Ապուրի սնունդը ադրբեջանցիների համար էր: Երեք ամսում Սամվելը 20 կգ քաշ է կորցնում:

Սամվելի հարազատներն առաջին նամակը ստանում են անհետացումից մեկ ամիս անց: Միջազգային Կարմիր Խաչի միջոցով հայ գերիները կարողանում են տեղեկացնել իրենց գտնվելու վայրի մասին: Մինչ այդ Սամվելի ծնողներն ու երիտասարդ կինն անորոշության մեջ էին:

Մյուս գերիների նման Գոբուստանի բանտում Սամվելը կամ շինարարություն էր անում, կամ էլ ադրբեջանցի բանտապահների ավտոմեքենաներն էր նորոգում: Հայ գերիների օրն ադրբեջանական բանտում անցնում էր դանդաղ, մահակների հարվածների տակ:

Յուրաքանչյուր հակահայկական դրսեւորում Գոբուստանում ավարտվում էր գերիների ծեծով: 40 հայ կար ադրբեջանական բանտում, որտեղ գրեթե ամեն օր բանտի աշխատակիցները նրանց ծեծում էին եւ փորձում հետքերն ու գերիներին շահագործելու դեպքերը թաքցնել Միջազգային Կարմիր Խաչի ներկայացուցիչներից:

«Սկզբում Կարմիր Խաչում չգիտեին, որ մեզ աշխատեցնում են: Հենց գալիս էին, բոլորիս կլցնեին բարակը, մաքուր շորեր կհագնեինք, կմտնեինք խցերը՝ իբր թե ո՛չ աշխատում ենք, ո՛չ էլ մեզ մատով կպչում են: Նույնիսկ չգիտեին, որ ծեծում են մեզ: Բայց օր է եղել, որ երեք անգամ են ծեծել»,- պատմում է Սամվելը: Քիչ չեն եղել նաեւ մարդիկ, ովքեր օգնել են հայ գերիներին, անգամ թերթեր բերել նրանց համար:

Մի օր էլ հայ գերիներին լուր են բերում, թե շուտով բոլորին ազատ են արձակելու: Տեղեկացնողն Ադրբեջանի ազգային անվտանգության ծառայության ավտոբուսի վարորդն էր, ով ղարաբաղցի գերու նախկին համագյուղացին էր: Բանտում լուրեր էին պտտվում նաեւ, թե զինադադարի միամյակի կապակցությամբ երկու կողմն էլ գերիներին ազատ է արձակելու: Գերությունից մեկուկես տարի անց Սամվելին ու նրա ընկերներին ազատ արձակեցին:

Հասնելով Երեւանի հիվանդանոցներից մեկը՝ Սամվելը մի գիշեր անգամ չկարողացավ համբերել: «Գոբուստանից չբաշարեցի փախչել, Երեւանից փախա»,- ասում է նախկին ռազմագերին:

Գերությունից հետո շարունակելով աշխատանքը Գյումրու զինվորական կոմիսարիատում՝ Սամվելը զբաղեցնում է 4-րդ մասի շարայինների ու սերժանտների հաշվառման ու ամրակցման բաժնի պետի պաշտոնը:

1997-ին զինապարտի անվան տակ նա հաշվառման է կանգնեցնում զինակոչիկի: «Երկրորդ մասի պետը գրել էր, որ զորակոչվել է, զինկոմն էլ թե՝ կանգնեցնել հաշվառման»:

Սամվելին հեռացնում են զինված ուժե-

ից: Նրան հանձնում են զինվորական գրքույկը, որտեղ գրված է. «Հանցավոր համաձայնության գալով երկրորդ մասի պետի հետ՝ զինակոչիկին որպես զինապարտ վերցրել է հաշվառման»: Հետագայում պարզվում է, որ իրականում հաշվառման կանգնեցվածը չի ծառայել բանակում, իսկ նրան տրված զինգրքույկում Սամվելի ստորագրությամբ ու կնիքով հաստատված 1997 թվականը առանց նրա իմացության փոխարինվել էր 1995-ով: «Զինգրքույկը կեղծել էին»,-համոզված է Սամվելը, որն անցած տարիներին բազում նամակներ է հղել պաշտպանության նախարարություն ու փորձել նկարագրել կատարվածը: Տասը տարի է նա սպասում է պատասխանի: Խորհրդարանական ընտրությունների առիթով էլ, երբ Սերժ Սարգսյանն այցելել էր յումրի, կրկին նամակ էր փոխանցել նրան՝ խնդրելով վերականգնել համակարգում:

41 տարեկան Սամվելը ֆիզիկական աշխատանք չի կարողանում կատարել: Գերության մեկուկես տարին նրանից խլեցին նյարդերն ու առողջությունը: Նախկին ռազմագերու ամենամեծ խնդիրը գլխացավերն են: Բողոքում է թույլ նյարդերից, որոնք գրգռվում են անգամ չնչին առիթով, ու հաճախակի կրկնվող ուշաթափությունից: Գիշերները հաճախ է արթնանում սրտի սուր ծակոցներից, կոկորդի հեղձուկից. «Գլխիս մեջ միանգամից ոնց որ սուր ինչ-որ բան մտցնես»:

Պետության միակ աջակցությունը նախկին ռազմագերուն կոնտուզիայի համար տրված հաշմանդամության երրորդ կարգն ու դրա համար վճարվող 28.000 դրամ թոշակն է: Ընտանիքը պահում է իր եւ մոր թոշակով, երբեմն էլ՝ հարազատների օգնությամբ: Արցախյան պատերազմում գերի ընկած զինվորները համարվում են մարտական գործողություններին մասնակցած անձինք եւ օգտվում նրանց համար սահմանված արտոնություններից: Նրանք չունեն գերու կարգավիճակ: Ռազմագերիների խնդիրներով զբաղվող ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը կարեւորում է նրանց հատուկ կարգավիճակ տալը՝ լուծումներ տալու նրանց առողջական, սոցիալական, աշխատանքի եւ հոգեբանական-վերականգնողական խնդիրներին:

http://www.hetq.am/arm/society/0707-s_padoyan.html

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Նախկին ռազմագերիների եւ նրանց ընտանիքների խնդիրների վերաբերյալ հասարակական իրազեկման մակարդակը

Հարցում N _____

Հարցման անցկացման վայրը _____

մարզ, ք./գ

Հարցումն անց է կացնում _____

Անուն, ազգանուն

Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանության և հասարակության մեջ նրանց ինտեգրման նպաստումը

1. Տարիքը 18-40 ___ 41-60 ___ 61 և ավելի ___

2. Սեռը _____

3. Զբաղմունքը _____

4. Գիտեք արդյո՞ք, թե ով է նախկին ռազմագերին այո ոչ

5. Ձեր շրջապատում կա՞ն ծանոթ նախկին ռազմագերիներ այո ոչ

6. Լսել եք արդյո՞ք ռազմագերիների խնդիրների մասին

եթե այո, խնդրում եմ նշել աղբյուրը

տպագիր մամուլ_____/տեղական-հանրապետական/
հեռուստատեսություն_____/տեղական-հանրապետական/
ռադիո_____

ինտերնետ_____
շփումներից_____
այլ_____

7. Ըստ Ձեզ, ինչպի՞սի խնդիրներ ունեն նրանք

հասարակության մեջ ինտեգրվելու_____
հոգեբանական_____
սոցիալական_____
առողջական_____
աշխատանքային_____
այլ_____

8. Ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը նրանց հանդեպ

Նրանք սովորական մարդիկ են, հասարակության լիարժեք անդամ _____
Խղճում եմ նրանց_____
Բացասական_____
Այլ_____

խնդրում եմ հիմնավորել Ձեր պատասխանը

_____

_____

9. Ըստ Ձեզ ովքե՞ր են պատասխանատու նրանց խնդիրների լուծման համար

_____

_____

10. Ըստ Ձեզ ինչպես կարող է հասարակությունը նպաստի նախկին ռազմագերիների ինտեգրմանը հասարակության մեջ:

_____

_____

11. Եթե ցանկություն ունեք ստանալ նախկին ռազմագերիների մասին զեկույցը, խնդրում ենք նշել Ձեր անունը և հասցեն:

_____

ageri.qxd 9/20/2007 2:49 PM Page 27

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Նախկին ռազմագերիների եւ նրանց ընտանիքների սոցիալական, առողջական, հոգեբանական, զբաղվածության խնդիրների, նրանց եւ նրանց ընտանիքների հասարակության մեջ ինտեգրվելու խոչընդոտները

Հարցում N _____

Հարցման անցկացման վայրը _____
մարզ, ք./գ

Հարցումն անց է կացնում _____
Անուն, ազգանուն

Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանության և հասարակության մեջ նրանց ինտեգրման նպաստումը

1. Հարցվող ռազմագերու և/կամ նրա ընտանիքի անդամ /ների/ի անուն ազգանունը

_____

2. Տարիքը _____

3. Օգտվում են արդյոք օրենքով նախատեսված

_____ հաշմանդամության թոշակից
_____ ընտանեկան աղքատության նպաստից
_____ այլ
_____ չեմ օգտվում

4. Գերության հետևանքով ծեռք եք բերել արդյո՞ք առողջական խնդիրներ/հիվանդություն

այո ոչ

եթե այո, նշել ինչպիսի

_____

5. Ունեք արդյոք հաշմանդամության կարգ

Եթե այո, որ կարգ _____

6. Ունեցել եք արդյո՞ք խոչընդոտներ հաշմանդամության կարգի տրամադրման/ստացման հետ կապված

Եթե այո, ինչպիսի և ում կողմից

_____

7. Օգտվում են արդյոք պետության կողմից տրամադրվող արտոնություններից առողջական խնդիրները լուծելու համար

այո ոչ

եթե այո, խնդրում եմ նշել ինչ արտոնությունից

_____

8. Նշանակված է արդյոք բժշկի կողմից դեղամիջոցներ, ինչ հաճախականությամբ եք օգտագործում, ինչպես եք ձեռք բերում, ինչ արժողության դեղեր են դրանք

_____

_____

9. Դիմել եք արդյ՞ք որևէ պետական մարմնի եւ ինչ հարցերով են դիմել դուք կամ Ձեր ընտանիքի անդամները գերությունից հետո,

ա/ եթե այո, խնդրում եմ նշել, թե որոնք են այդ հարց/եր/ը և կառույց/ներ/ը

_____

_____

բ/ Ինչպիսի լուծում է տրվել Ձեր հարցին

_____

_____

10. Ունեք արդյո՞ք աշխատանք

այո ոչ

Եթե ոչ, խնդրում եմ նշել

ա/ պատճառը

_____

_____

բ/ որտեղից եք հայթայթում միջոցներ

_____

_____

գ/ որքա՞ն է կազմում Ձեր /ընտանիքի / ամսական բյուջեն

_____

_____

դ/ Որոնք են ընտանիքի ապրուստի միջոցները

_____

_____

11. Ունեք արդյո՞ք այն զգացումը, որ Ձեր նկատմամբ հասարակության /հարազատներ, ընկերներ/ կողմից վերաբերմունքի փոփոխություն կա

ա/ եթե այո, ապա ինչպես է դա դրսևորվում

_____

_____

բ/ ըստ Ձեզ ո՞րն է պատճառը

_____

_____

12. Եթե կա բացասական փոփոխություն, ինչպե՞ս է դա ազդում կոնկրետ ռազմագերու կամ նրա ընտանիքի հոգեկան /հոգեբանական/ առողջության վրա:

Ունե՞ք արդյոք

ա/ օտարման, խորթության զգացում
բ/ զայրույթի կամ ագրեսիվության դրսևորումներ /որ նախկինում չեն եղել/
գ/ հուսախաբություն, հուսահատություն
դ/ տարբեր տիպի վախեր /սոցիալական, մթության, բարձրության, գժվելու, տարածության, շփման և այլն/
ե/ անքնություն, քնի խանգարումներ կամ մղձավանջային երազներ
զ/տրամադրության հաճախակի, անսպասելի փոփոխություններ կամ անկումներ
է/ ինքնասպանության մասին մտքեր կամ փորձեր
ը/ բնակավայրը կամ երկիրը փոխելու ցանկություն
թ/ ի՞նչը կցանկանայիք, որ փոխվեր Ձեր կյանքում